ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
*ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*
ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պեկինի տեխնոլոգիայի և բիզնեսի համալսարանի հետազոտող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միգրացիան Հայաստանում մեծ տարածում ունեցող երևույթ է, որի հիմնական շարժառիթը բնակչության արժանապատիվ աշխատանքի և ավելի բարենորոգ կյանքի փնտրտուքն է: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ միգրացիայի ընդգրկման շրջանակն ու զարգացման միտումները Հայաստանի համար ապաբնակեցման լուրջ մարտահրավեր են դարձել: Այս համատեքստում, հոդվածում վերլուծվել են Հայաստանում առկա միգրացիոն գործընթացները՝ հաշվի առնելով ՀՀ միգրացիոն մնացորդն ու սահմանահատումները: Անկախացմանը հաջորդող տարիներին Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը որոշակիորեն անդրադարձել է երկրից մեծամասշտաբ միգրացիոն արտահոսքի վրա: Բացի դրանից, վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ վերջին տարիների միգրացիոն մեծ հոսքերն ուղղակիորեն անդրադարձել են նաև երկրի ժողովրդագրական նկարագրի վրա: Բացահայտվել է նաև ամուսնալուծությունների և Հայաստանից մեկնողների միջև կոռելյացիոն կապ, որի հիմքն ընդունելի էկոնոմետրիկ թեստերի ցուցանիշներն են ու դետերմինացիայի ուժեղ գործակիցը:

Հիմնաբառեր. *ժողովրդագրություն, միգրացիայի մնացորդ, սահմանահատումներ, ամուսնալուծություններ, երկրից մեկնողների թիվ*
JEL: O15, R23, F22

Ներածություն: Միգրացիոն իրավիճակը Հայաստանում բավական սուր է, իսկ լայնածավալ արտագաղթը սպառնում է ապաբնակեցման հեռանկարով: Հայաստանի ժողովրդագրական հիմնախնդիրների դիտանկյունից միջ-

ազգային միգրացիայի ընթացիկ իրավիճակի և հիմնական միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անկախացումից հետո Հայաստանի բնակչությունն ունի միգրացիոն հակվածություն: Հատկապես երիտասարդների և բարձր որակավորում ունեցող կադրերի միգրացիան ի հայտ է բերում լուրջ մարտահրավերներ: Հայաստանում բնական հավելաճի գործակիցն անկում է ապրում, վերարտադրողական տարիքում գտնվող կանանց և տղամարդկանց քանակը, աշխատանքային ռեսուրսները նվազում են, իսկ ամուսնալուծությունների քանակը՝ ավելանում: Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի վերլուծությունը վկայում է, որ երկրում առկա է ժողովրդագրական ճգնաժամ: Այս համատեքստում, Հայաստանի միգրացիոն հոսքերի վերլուծությունն առաջնային հիմնախնդիր է դառնում, քանի որ հնարավորություն է տալիս գնահատելու և հասկանալու միգրացիոն հոսքերի հիմնական միտումները, ուղղվածությունը և ազդեցությունը երկրի տնտեսության վրա: Միգրացիոն հոսքերի գնահատմամբ հնարավոր է դառնում ժողովրդագրական «համաճարակի» դեմ պետական քաղաքականության «ճակատային հարձակման» կառուցակարգեր մշակելը:

Գրականության ակնարկ: Հայաստանում առկա միգրացիոն գործընթացները միշտ եղել են տեսաբանների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Ժողովրդագրական սուր ճգնաժամի ու դրա վնասների մասին բարձրաձայնվում է քաղաքական, տնտեսական և սոցիալական հիմնահարցեր քննարկող տարբեր ամբիոններից: Աշխատուժի միջազգային միգրացիայի դրդապատճառների հետաքրքիր մոտեցում է ներկայացված տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր *Հ. Բագրատյանի* «Մեգաէկոնոմիկա և գլոբալ տնտեսական խնդիրներ» աշխատությունում: Մասնավորապես, 21-րդ դարի սկզբին աշխարհի բնակչության 90%-ը դարձավ գրագետ, մի շարք երկրների տնտեսություններ ի վիճակի չեղան կլանելու գրագիտության այս մակարդակը, ինչը հանգեցրեց հատկապես երիտասարդների միգրացիոն հոսքերի դեպի աշխատանքային ռեսուրսների բացասական մնացորդ ունեցող երկրներ[1]: Հ. Բագրատյանի առաջարկը արդիական է նաև Հայաստանի համար, քանի որ միգրացիոն հոսքերի վերլուծության արդյունքում երկրից «ուղեղների արտահոսք» է բացահայտվել: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ միգրացիայի դիմելու առաջնային դրդապատճառը եղել և շարունակում է մնալ ավելի բարենորոգ կյանքի որոնումը:

Հայաստանում առկա միգրացիոն գործընթացները մանրամասնորեն վերլուծվել և քննարկվել են նաև տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր *Զ. Թադևոսյանի* «Կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիա: Իրավիճակը և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» աշխատությունում: Համապարփակ վերլուծվել են Հայաստանի միգրացիոն հոսքերի հիմնական ուղղություններն ու միտումները: ՀՀ վիճակագրական կոմիտեի «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2016 թթ.»[2] և «Հայաստանի

[1] Տե՛ս **Багратян Г.А.,** Мегаэкономика и глобальные экономические проблемы: Учебно-методическое пособие, Ер., Издательство РАУ, 2013, էջ 31:

[2] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2016 թթ.» http://armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf:

ժողովրդագրական ժողովածու, 2017»[3] հետազոտություններում ամփոփվել են 2016 թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքները միգրացիոն գործընթացների վերաբերյալ: Հայ-ռուսական համալսարանը 2017 թ. մշակել է «ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015-2017 թթ.) մշտադիտարկում՝ ընտրանքային հետազոտության միջոցով» գիտահետազոտական աշխատանքի մասին զեկույցը[4]: Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ արտաքին միգրացիոն գործընթացներում Հայաստանի տնային տնտեսությունների ներառվածության մակարդակը, նախորդ տարվա համեմատ, բարձրացել է: Դրանցում ներառված անդամ/ով/ներով տնային տնտեսությունների տեսակարար կշիռը, կազմելով 35.1%, գերազանցել է ոչ միայն նախորդ տարվա, այլև 2015 թ. նույն մեծությունները (հաջորդաբար՝ 3.5 և 1.3 տոկոսային կետով)[5]:

Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր *Դարոն Աճեմօղլուն* Սփյուռքի առկայությունը Հայաստանի բնակչության համար դիտարկում է որպես երկիրն ավելի դյուրին կերպով լքելուն նպաստող գործոն, իսկ հատկապես երիտասարդների միգրացիան՝ սարսափելի վտանգ Հայաստանի համար[6]: Իրականում, աջակցող ցանցերի նշանակությունը միգրացիոն գործընթացներում թերագնահատել չի կարելի, քանի որ դրանք լրացուցիչ խթան են երևույթի տարածման համար: Իսկ երիտասարդների արտագաղթի վտանգը բացատրվում է երկրի աշխատանքի շուկայի զարգացման հիմնական ներուժի կորստով: Երիտասարդների պարագայում արտագաղթն ի հայտ է բերում նաև սոցիալական հիմնախնդիրներ, այդ թվում՝ ամուսնությունների թվի նվազում և ամուսնալուծությունների թվի աճ:

Միգրացիայի ընթացիկ իրավիճակի խորքային վերլուծություն է իրականացվել «Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ» զեկույցում: Հետազոտության շրջանակում գնահատվել է էմիգրացիոն ներուժը, որը սովորաբար առկա բնակչության՝ մշտական բնակավայրից երբևիցե մեկնելու մտադրությունն է: Հեղինակները նշում են, որ 1998 թ. արտագաղթելու որևէ մտադրություն չուներ առկա բնակչության 87%-ը, 2008 թ.՝ 83,1%-ը, իսկ 2013 թ.՝ արդեն 62,4%-ը[7]: Երկրում առկա արտագաղթի մտադրություն ունեցող բնակչության տոկոսի ավելացումը սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ է վեր հանում, ինչպես նաև հնարավորություն է տալիս գնահատելու և իրականացնելու համալիր միջոցառումներ, որոնք կհանգեցնեն արտագաղթի տեմպերի նվազմանը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածի համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայազգի և օտարերկրյա տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, դասական և ժամանակակից տնտեսագիտական

---

[3] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու», 2017 թ., http://www.armstat.am/am/?nid=81&id=1991:

[4] http://science.rau.am/rus/7/3592

[5] Տե՛ս նույն տեղը:

[6] https://www.azatutyun.am/a/26933679.html

[7] Տե՛ս **Զ. Թադևոսյան, Կ. Հակոբյան, Դ. Գալոյան, Լ. Աղաջանյան**, Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., 2014, էջ 21:

տեսությունների հիմնադրույթները, աշխատուժի միգրացիայի ոլորտը կարգավորող միջազգային կոնվենցիաները, Հայաստանի պետական մարմինների որոշումները, հաշվետվություններն ու ռազմավարական ծրագրերը, ոլորտին առնչվող մասնավոր կազմակերպությունների հաշվետվությունները, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները և այլն: Վերջիններիս հետազոտման և վերլուծության նպատակով օգտագործվել են SPSS17.0 և Eviews 10 SV ծրագրային փաթեթները:

Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի գնահատման համար հավաքագրվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվությունը ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ: ՀՀ սահմանահատումների թվի վերլուծության համար 1990-1999 թթ. տվյալները վերցվել են ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունից, իսկ 2000-2017 թթ. տվյալները՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պաշտոնական կայքէջից: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում միգրացիոն ոլորտին առնչվող վիճակագրությունն ունի մի շարք բացթողումներ և խնդիրներ: Մեկ միասնական մարմնի կողմից վիճակագրության վարման բացակայությունը հաճախ թերի է դարձնում միգրացիոն հոսքերի համեմատական վերլուծությունը: Մյուս կողմից, միգրացիոն գործընթացները պարբերաբար գնահատվում ու ուսումնասիրվում են տարբեր դաշտային աշխատանքների միջոցով, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու միգրացիայի հիմնական դրդապատճառները տարբեր թիրախային խմբերի համար:

Համեմատական վերլուծության է ենթարկվել Հայաստանից մեկնած միջազգային միգրանտների տեսակարար կշիռը ընդհանուր միգրանտների մեջ՝ ըստ միջին և բարձր եկամուտ ունեցող երկրների, որի աղբյուրը ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի վիճակագրական տվյալներն են:

Հոդվածում առկա վիճակագրության հավաքագրման համար կիրառվել է երկու առանցքային մոտեցում: Հիմնական տեղեկատվական շտեմարանների հավաքագրման արդյունքում իրականացվել է միգրացիոն հոսքերի քանակական և որակական վերլուծություն: Քանակական վերլուծության պարագայում բացահայտվել են Հայաստանում առկա միգրացիոն իրավիճակի հիմնական միտումները, իսկ որակական վերլուծության շնորհիվ գնահատվել է միգրացիոն հոսքերի ազդեցությունը երկրի սոցիալական իրավիճակի, մասնավորապես՝ ամուսնալուծությունների քանակի վրա: Երկրորդային տեղեկատվական շտեմարանների հետազոտության արդյունքում, հոդվածում ներկայացվել են Հայաստանի միգրացիոն հիմնախնդիրներին առնչվող առկա վերլուծությունները, հետազոտությունները և ուսումնասիրությունները:

Վերլուծություն: Հայաստանում առկա ժողովրդագրական խնդիրները միգրացիոն գործընթացներով հիմնավորելու համար գծապատկեր 1-ում մի կողմից դիտարկվել է ՀՀ մշտական բնակչության թվաքանակը առանց երիտասարդների, իսկ մյուս կողմից՝ 15-29 տարեկան երիտասարդներինը:

Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ երիտասարդները միգրացիոն գործընթացների «թիրախում» են: Բնակչության ընդհանուր թվաքանակի (առանց երիտասարդների) տարեկան աճը 2011-2018 թթ. միջինում կազմել է 1.2%, իսկ երիտասարդների թվաքանակի տարեկան միջին աճի տեմպը՝ -4.4%:



Գծապատկեր 1. ***ՀՀ մշտական բնակչության թվաքանակը (առանց երիտասարդների, հազար մարդ) և երիտասարդների թվաքանակը (15-29 տարեկան, հազար մարդ), 1991-2018 թթ.***[8]

Բնակչության թվաքանակի՝ ըստ առանձին տարիքային խմբերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 10-14, 30-34, 80 և բարձր տարիքի բնակչությունը, 2011 թ. համեմատ, 2018-ին ավելացել է համապատասխանաբար՝ 4.3%-ով, 17.8%-ով և 21.3%-ով, մինչդեռ 15-29 տարեկան երիտասարդների թվաքանակը նվազել է շուրջ 21.5%-ով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի մշտական բնակչության թվաքանակի նվազման վրա անդրադարձող գործոնը բնակչության մեխանիկական շարժն է կամ միգրացիան:

Գծապատկեր 2. ***ՀՀ բնակչության միգրացիայի մնացորդը (հազար մարդ), 1990-2018 թթ.***[9]

Հայաստանի անկախության տարիներին միգրացիայի մի քանի խոշոր ալիք է նկատվել. առաջին ալիքը պայմանավորված էր ԽՍՀՄ փլուզմամբ, արցախյան պատերազմով և շրջափակմամբ. 1991-1994 թթ. Հայաստանից

[8] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» (2005-2017 թթ.), «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» (2000-2004 թթ.):

[9] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» (2005-2018 թթ.), «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» (2000-2004 թթ.):

շուրջ 550 հազար մարդ է հեռացել: Հաջորդ ալիքը սկսվել է 2008 թ. և թեև պակաս զանգվածային է, քան 1991-2001 թթ. և շատ ավելի պակաս, քան 1991-1994 թթ., բայցևայնպես, Հայաստանը լքողների թիվը մեծ է[10]:

ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալները փաստում են, որ միգրացիայի մնացորդը 1999-2009 թթ. ընթացքում հիմնականում դրական ուղղվածություն է դրսևորել, ինչը կարելի է պայմանավորել այդ տարիներին Հայաստանում տնտեսական աճի ցուցանիշներով: 2010 թ., նախորդ տարվա 14.1% տնտեսության անկման և 18.7% գործազրկության մակարդակի պայմաններում, միգրացիայի հաշվեմնացորդը շուրջ կրկնակի ավելացել է[11]: Բայցևայնպես, պետք է նշել, որ միգրացիային առնչվող վիճակագրությունը Հայաստանում բավական խնդրահարույց է: Մասնավորապես, Հ. Բագրատյանի հավաստմամբ, 1989-1991 թթ. Ադրբեջանից Հայաստան է ժամանել 400000 մարդ, որոնց մուտքը, ՀԽՍՀ-ում սահմանապահ ծառայությունների բացակայության պատճառով, չի արձանագրվել: Միևնույն ժամանակ, արձանագրվել է ԱՄՆ և ՌԴ մեկնած 340-400 հազար ՀՀ քաղաքացիների թիվը, ինչի արդյունքում արձանագրվում է, որ այդ ժամանակահատվածում երկիրը լքել է ոչ թե 1022 հազար ՀՀ քաղաքացի, այլ՝ 682 հազար[12]:

1999-2017 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ժամանածների թվաքանակը մեկնածներինը գերազանցում է միայն 2004-2006 թթ., ինչը դարձյալ բացատրվում է Հայաստանի տնտեսության աշխուժացմամբ: 2007 թ. նախաճգնաժամային ժամանակահատվածից սկսած՝ արտագաղթի ցուցանիշների տարեկան աճի տեմպերն ավելի ընդգծվեցին: Ճգնաժամի հետևանքները դեռ չվերացրած՝ երկրում արտագաղթը շարունակաբար աճում էր, իսկ երկրի բնակչության թիվը մոտենում 3 միլիոնին: Տնտեսական պատճառներից բացի, այս տարիներին կարելի է առանձնացնել նաև քաղաքական պատճառներ. Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների կայացմանն առնչվող խնդիրները, Հայաստան-Ադրբեջան և Հայաստան-Թուրքիա քաղաքական հակասությունները: Իսկ հայ-ադրբեջանական ռազմական բախումները ուղղակիորեն և անուղղակիորեն անդրադառնում են բնակչության շարժի վրա:

2018 թ., դիտարկվող ժամանակահատվածում առաջին անգամ, արձանագրվել է սահմանահատումների դրական մնացորդ: Միևնույն ժամանակ, ՀՀ կացության կարգավիճակ ստացած Հնդկաստանի քաղաքացիների թիվը, 2017 թ. համեմատ, 2018 թ. ավելացել է 103.3%-ով[13]: Հնդիկների 98.6%-ը 2018 թ. ստացել է ժամանակավոր կացության կարգավիճակ՝ ուսման նպատակով:

Ուսմանը զուգահեռ, նրանք ներգրավված են նաև ՀՀ աշխատանքի շուկայում, հատկապես՝ ցածր որակավորում պահանջող աշխատանքներում, մասնավորապես՝ շինարարությունում: Հայաստանում կացության կարգավիճակ ստացած հնդիկների թվաքանակի աճը պայմանավորված է էժան և

---

[10] Տե՛ս **Հ. Միքայելյան,** Արտաքին միգրացիան Հայաստանում. միտումները, ուղղությունները, թվաքանակը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6836#19_b:

[11] ՀՀ վիճակագրական կոմիտե, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» (2011 թ.):

[12] https://m.mamul.am/am/news/131157

[13] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018», «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին»

որակյալ բժշկական կրթություն ստանալու հեռանկարով, ինչպես նաև 2017 թ. Հնդկաստանի հետ վիզային քաղաքականության փոփոխությամբ[14], որով Հայաստանում վիզա ստանալու ընթացակարգերը բավական դյուրինացվել են Հնդկաստանի քաղաքացիների համար:



Գծապատկեր 3. ***ՀՀ-ում սահմանահատումները 1999-2018 թթ., հազար մարդ[15]***

Միգրացիայի սոցիալական վտանգը շեշտադրելու, ինչպես նաև ամուսնալուծությունների թվաքանակի արձանագրված նշանակալի փոփոխության և միգրացիայի միջև փոխառնչությունները բացահայտելու համար իրականացվել է էկոնոմետրիկ վերլուծություն, որը հնարավորություն է տալիս ընկալելու, թե միգրացիան (այս պարագայում՝ մեկնողների թիվը) ինչպես է անդրադառնում երկրում ամուսնալուծությունների թվաքանակի վրա:

Գծապատկեր 4-ը հստակեցնում է ամուսնալուծությունների և Հայաստանից մեկնողների միջև ուժեղ կոռելյացիոն կապը (0.968): Էկոնոմետրիկ հաշվարկները ցույց են տալիս, որ էկոնոմետրիկ թեստերի ցուցանիշներն էապես ընդունելի են, իսկ դետերմինացիայի գործակիցը բավական ուժեղ է: Հետևաբար, վերը նշված ժողովրդագրական հիմնախնդիրներն ավելի են սրվում նման մեծածավալ միգրացիոն հոսքերի արդյունքում՝ ի հայտ բերելով ինչպես ծնելիության մակարդակի բարձրացման, այնպես էլ արտագաղթի կանխման մարտահրավերներ:

Հայաստանից միգրացիոն հոսքերի իրավիճակային վերլուծություն իրականացվել է նաև ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի վիճակագրական տվյալների հիման վրա: Վերլուծությունը փաստում է, որ դիտարկվող ժամանակահատվածում էական փոփոխությունների է ենթարկվել ինչպես միջազգային միգրանտների սեռային կազմը, այնպես էլ նպատակակետ երկրների ընտրությունը:

---

[14] Տե՛ս ՀՀ Կառավարության 2017 թ. փետրվարի 9-ի N 103-Ն «ՀՀ Կառավարության 2008 թ. ապրիլի 4-ի N 329-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում, ՀՀ Կառավարության 2017 թ. նոյեմբերի 16-ի N 1435-Ն «ՀՀ Կառավարության 2008 թ. ապրիլի 4-ի N 329-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշում:

[15] http://www.smsmta.am/?menu_id=17



Գծապատկեր 4. ***Ամուսնալուծությունների թվաքանակի և Հայաստանից մեկնողների թվաքանակի կոռելյացիոն կապը***

Հայաստանի մշտական բնակչության թիվը 1990-2017 թթ. նվազման միտում է դրսևորել, իսկ Հայաստանից մեկնած միջազգային միգրանտների թիվը՝ աճի միտում: Տղամարդկանց տեսակարար կշիռը միջազգային միգրանտների մեջ կազմել է միջինը 52.6%: Ընդ որում, Հայաստանից մեկնող միջազգային միգրանտների մեջ կանանց տեսակարար կշիռը, 1990 թ. 51.4%-ի համեմատ, 2017 թ. նվազել է 5.1 տոկոսային կետով՝ կազմելով 6.3%: Միևնույն ժամանակ, տղամարդկանց տեսակարար կշիռը միջազգային միգրանտների մեջ, 1990 թ. համեմատ, նույն չափով՝ 5.1 տոկոսային կետով, ավելացել է՝ 2017 թ. կազմելով 48.6%[16]:

Դիտարկվող բոլոր տարիներին միջին եկամուտ ունեցող երկրների գրավչությունը, Հայաստանից մեկնող միգրանտների համար, ընդգծված առավելություն է դրսևորել բարձր եկամուտ ունեցող երկրների նկատմամբ: Գծապատկեր 5-ում հստակ ընդգծվում է, որ ինտեգրալային ցուցանիշը՝ երկու կորերի միջև գտնվող մակերեսը, տարիների ընթացում նվազում է: Սա արդեն բացատրվում է միգրանտների ընտրած երկրների տարբերակման միտումով: 2017 թ. Հայաստանից միգրանտների շուրջ 55%-ը մեկնել է Ռուսաստան, 9.7%-ը՝ ԱՄՆ: Արևմտյան Եվրոպայի երկրներից 2017 թ. Հայաստանից մեկնած միգրանտները ընտրել են Ֆրանսիան (19372 մարդ), Հունաստանը (14028 մարդ) և Գերմանիան (12651 մարդ):

[16] Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի վիճակագրական տվյալներ, http://www.un.org/en/development/desa/population/migration/data/estimates2/estimates17.shtml:



Գծապատկեր 5. ***Հայաստանից մեկնած միջազգային միգրանտների տեսակարար կշիռը ընդհանուր միգրանտների մեջ՝ ըստ միջին և բարձր եկամուտ ունեցող երկրների***[17]

Հայաստանից մեկնած միգրանտների նախընտրած տարածաշրջանների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր տարիներին Եվրոպան հայաստանցի միգրանտների համար թիվ 1 ծգողությամբ տարածաշրջանն է: Հետաքրքիր միտում է նաև այն, որ 1990-ականներին դեպի Աֆրիկա (հիմնականում՝ Լիբիա և Եգիպտոս) միգրանտների տեսակարար կշիռը 0.09% էր կազմում, իսկ դեպի Օվկիանիա՝ 0.04%: Մինչդեռ, արդեն 2017 թ. իրավիճակը փոխվեց. դեպի Օվկիանիա (Ավստրալիա) միգրանտների տեսակարար կշիռը կազմեց 0.15%, իսկ դեպի Աֆրիկա՝ 0.05%:

Եզրակացություններ: Այսպիսով, Հայաստանում միգրացիոն հոսքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ միգրացիոն հիմնախնդիրները մեր հանրապետությունում իրոք օրակարգային են և պահանջում են հրատապ լուծումներ: Վիճակագրական ցուցանիշների վերլուծությունը փաստում է, որ միգրացիոն գործընթացներում ակտիվ ներգրավված են երիտասարդները: Իսկ տեսաբանների առաջարկած հիմնական մոտեցումների ուսումնասիրությունը բացահայտում է, որ միգրացիայի սոցիալ-տնտեսական նշանակությունը առավել սուր է դրսևորվում երիտասարդների պարագայում, ինչը տրամաբանական է: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման այս դարաշրջանում մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող երիտասարդը չի հանդուրժի բուհից աշխատաշուկա անցման երկարատև փուլը կամ արժանապատիվ աշխատանքի բացակայությունը, որի պատճառը Հայաստանի աշխատանքի շուկայի առաջարկի ու պահանջարկի խրոնիկ անհավասարակշռությունն է:

Հայաստանում դիտարկվող միգրացիոն գործընթացներն անդրադարձել են նաև բնակչության ծերացման գործակցի վրա, որը, 1990 թ. 32.4%-ի փոխարեն, 2017 թ. կազմել է 82.4%[18]: Մի շարք հետազոտություններում նշվում է, որ բնակչության ծերացումը հանգեցնում է հանցավորության ու ամուսնա-

[17] Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի վիճակագրական տվյալներ, http://www.un.org/en/development/desa/population/migration/data/estimates2/estimates17.shtml:

[18] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» (2018 թ.), էջ 47, https://www.armstat.am/file/article/demog_2018_2.pdf:

լուծությունների նվազմանը[19], սակայն Հայաստանում, 1999 թ. համեմատ, 2017 թ. հանցագործությունների թիվն ավելացել է 75%-ով (17546 հանցագործություն), իսկ ամուսնալուծություններինը՝ շուրջ 3 անգամ: Բնակչության՝ նման մասշտաբների ծերացման սոցիալ-տնտեսական վնասներն ակնհայտ են՝ աշխատանքային ռեսուրսների քանակի նվազում, պետական բյուջեի եկամուտների և ծախսերի անհավասարակշռություն: Այս ամենը ժողովրդագրական «համաճարակի» դեմ պետական քաղաքականության «ճակատային հարձակման» կառուցակարգերի կիրառումը դարձնում է հրատապ:

Ինչպես և կարելի էր ենթադրել, Հայաստանում սոցիալ-տնտեսական իրավիճակը տարիների ընթացքում իր ուղղակի ազդեցությունն է ունեցել երկրի միգրացիոն գործընթացների վրա: Սոցիալ-տնտեսական ցուցանիշների դրական միտումներին զուգահեռ, արտագաղթի ցուցանիշները հիմնականում նվազում են արձանագրել, իսկ տնտեսական ցնցումներն ու տատանումները հանգեցրել են միգրացիոն հոսքերի ավելացմանը: Միևնույն ժամանակ, միգրացիոն հոսքերի նման մասշտաբներն իրենց անդրադարձն են թողել երկրի սոցիալական միջավայրի վրա: Մասնավորապես, հոդվածում կատարված էկոնոմետրիկ վերլուծությունը ցույց է տվել Հայաստանից մեկնողների և ամուսնալուծությունների քանակի միջև դրական կոռելյացիոն կապը: Վերջին հաշվով, վիճակագրական ցուցանիշների վերլուծության շնորհիվ բացահայտվում և միգրացիոն քաղաքականությունը մշակող պետական մարմիններին անմիջական ազդակներ են ուղղվում ավելի ճկուն ու գործնական կառուցակարգերի մշակման համար:

Հայաստանի միգրացիոն իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ արտագաղթի ցանկությունը և ընկալումները պայմանավորված են Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավիճակին վերաբերող խորքային համակարգային խնդիրներով: Հետևաբար, միգրացիայի կանխմանն ուղղված միջոցառումների հիմքում անհրաժեշտ է դիտարկել այս խնդիրների բացահայտումն ու հստակ սահմանված կառուցակարգերով լուծումը:

Հայաստանում ժողովրդագրական իրավիճակի համապարփակ վերլուծությունը բացահայտեց ընթացիկ փուլում առկա խորը ճգնաժամն ու մարտահրավերները, որոնք անորոշ են դարձնում երկրում ժողովրդագրական իրավիճակի ապագան:

Օգտագործված գրականություն

1. Թադևոսյան Զ., Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ., Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., 2014:
2. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2016 թթ.»:
3. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» (2005-2017 թթ.):

[19] Տե՛ս Advantages and Disadvantages of an Ageing Population, https://sites.google.com/site/ihst1110project10/project-report/why-is-the-australian-population-ageing-1:

4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (2000-2004 թթ.):
5. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018»:
6. ՀՀ Կառավարության 2017 թ. փետրվարի 9-ի N103-Ն «ՀՀ Կառավարության 2008 թ. ապրիլի 4-ի N329-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում, ՀՀ Կառավարության 2017 թ. նոյեմբերի 16-ի N 1435-Ն «ՀՀ Կառավարության 2008 թ. ապրիլի 4-ի N 329-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշում:
7. Багратян Г.А., Мегаэкономика и глобальные экономические проблемы: Учебно-методическое пособие, Ер., Издательство РАУ, 2013.
8. Advantages and Disadvantages of an Ageing Population, https://sites.google.com/site/ihst1110project10/project-report/why-is-the-australian-population-ageing-1.
9. https://www.azatutyun.am/a/26933679.html
10. http://armstat.am
11. http://science.rau.am/rus/7/3592
12. http://www.smsmta.am/?menu_id=17

ДАВИД АХВЕРДЯН
Директор исследовательского центра АГЭУ “Амберд”, доктор экономических наук, профессор

ТАТЕВИК ВАРДАНЯН
Исследователь Пекинского университета технологии и бизнеса

Всеобъемлющий анализ миграционных потоков в Армении.– В Армении миграция - явление, имеющее широкое распространение, которая является основной причиной поиска достойной работы и лучшей жизни населения. Однако необходимо учитывать, что для Армении серьезным вызовом расселения стали рамки расширения и тенденции развития миграционных потоков. В этом контексте в статье были проанализированы миграционные процессы в Армении, учтены миграционный баланс РА и пересечение границ. После независимости страны социально-экономическая и политическая ситуация в Армении конкретно отразилась на масштабном миграционном оттоке из страны. Кроме того, в результате анализа в статье было выявлено, что сильные миграционные потоки последних лет напрямую сказались и на демографической ситуации в стране. Кроме того, выявлена также корреляционная связь между разводами и выездами из Армении, основой которой являются показатели приемлемых эконометрических тестов и сильный коэффициент детерминации.

Ключевые слова: *демография, миграционное сальдо, пересечение границ, разводы, число выезжающих из страны.*
JEL: O15, R23, F22

DAVIT HAKHVERDYAN
Director of "Amberd" ASUE Research Center,
Doctor of Economics, Professor

TATEVIK VARDANYAN
Researcher at Beijing Technology and Business University

Comprehensive Analysis of the Migration Stocks in Armenia.– Migration is widespread in Armenia. The main reason for migration is the search for decent work and a better life for the population. However, it should be borne in mind that the scope of expansion and trends in migration development have become a serious challenge for Armenia for resettlement. In this context, the paper analyzes the migration processes in Armenia, taking into account the migration balance of Armenia and border crossing. According to the analysis in the research, strong migration flows in recent years have directly affected the demographic situation in the country. In addition, the correlation between divorces and those leaving Armenia was also revealed, which is based on indicators of acceptable econometric tests and a strong coefficient of determination.

Key words: *demographics, migration balance, border crossings, divorces and the number of people leaving the country.*
JEL: O15, R23, F22